ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

10.05.2018 N 02/16.4/2225-18

<<Սպիտակ Կամար>> սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերության
տնօրեն պարոն Հայկ ԱԽՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ախոյան

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկի և <<Սպիտակ Կամար>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2013 թվականի հուլիսի 31-ին կնքվել է ՀՀ Արագածոտնի մարզի Վարդենիսի դպրոցի շինարարական աշխատանքների իրականացման N ԲԸԱՀԱՇՁԲ-13/17 գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրով նախատեսված աշխատանքները սահմանված ժամկետում ամբողջությամբ չեն կատարվել և համաձայն Պայմանագրի 3.1.4 կետի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն 2018 թվականի մայիսի 11-ից միակողմանի լուծում է Պայմանագիրը՝ մնացորդային 57456076 ՀՀ դրամ գումարի չափով:

Տեղեկացնում եմ, որ համաձայն Պայմանագրի 6.3 կետի՝ <<Սպիտակ Կամար>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին որպես տուգանք պետք է փոխանցի 2099866 (երկու միլիոն իննսունինը հազար ութ հարյուր վաթսունվեց) ՀՀ դրամ:

Համաձայն ՀՀ կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի՝ Պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ ծանուցումը տեղադրվել է gnumner.am կայքում:

Հարգանքով՝

Արամ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՀ ԿԱ ՔՊԿ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական
և հաշվապահական հաշվառման վարչություն. Աշոտ Բաբայան
Հեռ: 011621727